ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԵՐԵՎԱՆԻ ԱՋԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ

ք. Երևան Աջափնյակ, Մարգարյան 35
/093/874487, /010/343111

06 հունիս 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ N2

<< Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն >> ՊՈԱԿ-ին տնօրենի պարտականությունները ժամանակավոր կատարող

<<Արմվիլ Գրուպ >> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու մասին

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և <<Արմվիլ Գրուպ >> ՍՊԸ-ի միջև 02.02.2024թ-ին կնքվել է << ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-3-Ա >> ծածկագրով << Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն>> ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանիհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման գնման պայմանագիր, որի՝ 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագրով և գնման-վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ, սակայն <<Արմվիլ Գրուպ >> ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի իրականացվել ապրանքի մատակարարում՝ խախտելով պայմանագրով սահմանված վաճառողի պարտավորությունները, որի արդյունքում 03.06.2024թ-ին գնորդը միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը՝ այն համարելով լուծված 629,4 (վեց հարյուր քսանինը դրամ, քառասուն լումա) ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով, կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամաբ հաստատված <<Գնումներ գործընթացի կազմակերպման >> կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, 03.06.2024թ <<Արմվիլ Գրուպ>> ՍՊԸ-ին ուղարկվել է համապատասխան ծանուցում և տրվել է 3 աշխատանքային օր՝ տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման 857,38 /ութ հարյուր հիսունյոթ դրամ երեսունութ լումա/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 1286,07 /մեկ հազար երկու հարյուր ութսունվեց դրամ յոթ լումա /ՀՀ դրամը գումարները Շահառուի 900008000664 հաշվեհամարին փոխանցելու համար, սակայն սահմանված ժամկետում <<Արմվիլ Գրուպ >> ՍՊԸ-ի կողմից չի վճարվել պայմանագրի և որակավորման ապահովումների գումարը:

Ղեկավարվելով <<Գնումների մասին >>ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի << ա >> պարբերությամբ

ՈՐՈՇԵՑԻ

1. <<Արմվիլ Գրուպ >> ՍՊԸ-ի տվյալները համապատասխան հիմքերով ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Տնօրենի պարտականությունները ժ/կատարող՝ Ա. Սարգսյան